

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ <<ԲԱՐՔԱՌՆԵՐԻ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ>> ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և Հայաստանի
Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728
հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական
դպրոցների աշակերտների շրջանում <<Բարբառների երկխոսություն>>
մարզային մրցույթ-փառատոնի կանոնակարգը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական
դպրոցների աշակերտների շրջանում <<Բարբառների երկխոսություն>>
մարզային մրցույթ-փառատոնի կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N2
հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական
դպրոցների աշակերտների շրջանում <<Բարբառների երկխոսություն>>
մարզային մրցույթ-փառատոնի մարզային փուլի ժյուրիի կազմը՝ համաձայն
N3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական
դպրոցների աշակերտների շրջանում <<Բարբառների երկխոսություն>>
մարզային մրցույթ-փառատոնի տարածքային փուլի անցկացման
կազմակերպիչների անվանացանկը՝ համաձայն N4 հավելվածի:

2. Կազմկոմիտեին / նախագահ Գ. Բադալյան/՝

1) ապահովել մրցույթ-փառատոնի անցկացման մասսայականությունը.

2) կազմակերպել մրցույթ-փառատոնի մարզային փուլի բացման և
փակման հանդիսավոր արարողություն.

3) մրցույթ-փառատոնի ավարտից հետո ներկայացնել գրավոր
հաշվետվություն:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի
տեղակալ Ա. Ղուկասյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ